խեալ և մնայ նա միայն ի ձեռս նորա, և ըմբռնեալ զնա տայ ի ձեռս հասասպաշուն. և նա տարեալ զնա ի զատին, և նա ոչ կարացեալ վճիռ առնել նմա թէ Փոքր է, եւ նոքա տարեալ ի վէզիրն, եւ նա զայս տվեալ թէ Դատաստանաւ տեսցի. և դարձեալ տարան ի զատին, և ոչ գրեաց դարձեալ թէ Սպանցի. և դարձեալ տարան ի վէզիրն թէ Չգրեաց զատին. և վէզիրն խոստացեալ պարգեւս եւ ազատութիւն՝ թէ ուրասցի զԲրիստոս և առնել զնա առաջի իւր. և նա ոչ հաւանեալ. և տարաւ զնա միականի սուպաշին, առանց հուճէթի կախեցին ի նոյն տեղւոջն ի դէմ Պէզէստանին: Եւ երեկոյիս Վարդապետն ի ժամ ոչ զնաց եւ զայն ունէր ի մտի թէ ի Կիրակէ օրս ի դաս քաշեսցէ զՉաքարեան, և ամենեքեան որ անդն կային ի բարեկամաց մեր, բազում աղերսանօք անկեալ յոտս եւ ի ձեռս նորա. և ասացեալ թէ Ելանեմ ի քաղաքէս. և կրկին աղաչեցին. և ասաց թէ Զվեղարն իմ յոտս ձեր կոխան արարէք, թո՛ղ երթայ ի Պուրսա, առնէ զայն թուղթն զոր ուղարկեալ է վասն իմ, և զնորա վիրաւորեալ սիրտն մխիթարէ, որպէս որ վիրաւորէ ինձ համար թէ Քեզ զատ ունի և զքո տեղդ կ'առնէ ի ձեռացդ. քանզի նա իմ հայրն է և զնա խոցեր է ինձ համար, և նա վասն է՞ր ինձ անէծք ասէ. թող զայդ երթայ մեղայ ասէ նորա թէ Ի զուր արարի զայդ բանդ և գայ և ես զդա արձակեմ: Եւ սոքա ևս կրկին աղաչեցին՝ Այո՛ ասելով՝ համբերել ժամուն:

Եւ առաւօտուս Շաբաթ օր (8 Մարտ) Յոհաննու տօն: Բազում ջանս արարեալ հօրն իմ և մեր բարեկամացն՝ բերեալ զՉաքարեան եւ մուծեալ ի ներս եւ մերայինքս յաջմէ և յահեկէ Վարդապետին բազում թախանձանօք և աղերսիւ թէ Արձակեա՛ ի կապանացն անիծից: Եւ նա անկաւ յոտս նորա գլուխ ի բաց եւ հայցէր զթողութիւն Մեղա՛յ ասելով. և Վարդապետն